ՀԱՆԳԻՍ ԿՈՍՄՈՓՈՍԵԱՅ

Զ· ՏԱՐԻ· 1863 | ՄԱՄՈՒԼ ԸՆԿԵՐԱՑԻՆ ԱՇԽԱՐՀԻՆ ԼՈՑՍՆ Է, ԵՒ ՈՒՐ ՈՐ ԼՈՑՍ ԿԱՑ, | ԹԻ 135
Ժ· ՇՐՋԱՆ | ՀՈՆ ԿԱՑ ՆԱԵՒ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՏԸ : Վ· ՀԻՒԿՕ· | ՄԱՅԻՍ 15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

Քանի մը խօսք : — Ազգային Սահմանադրութիւն · Ընդ Ձեզ : — Հայկական Նամականի : — Յաղագս : — Տրամախօսութիւն : — Ազդ :

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

Ծ՚աղէնը իր նախորդ երկու շաբաթը Պօլսի մէջ կատարելէն ետև՝ այսօր վերստին իր հայրենի հողը կը գտնայ և կը յուսայ այս տեղ բոլորովին արմատ բռնել և ապրիլ: Գտնելիքները հովերը սոսկալի էին Ծ՚աղէնը գաղթել այլուր և աւելի ազատ օդ ու բերրի երկիր մը փնտռել: Սակայն պէտք որ մեկ կողմէն աղատութիւն գտաւ այս տարագրութեամբը, միւս կողմէն այնպիսի դըժուարութիւններու հանդիպեցաւ որ հեռաւոր խմբագրութեան յարակից են և իր անկանոն հրատարակութեան առիթ տուին: Ասոր անպատեհութեան վերջ տալու համար մեզ կը մնար կամ Պօլիս Ծ՚աղէնն մօտ գնալ և ի մօտաստ անոր խմբագրութեան գործերուն պարապիլ, և կամ Ծ՚աղէնը այս տեղ փոխադրել: Ասոր վերջին միջոցը աւելի գործադրելի էր և մեզի փափաքելի, ըստ որում Ծ՚աղէնը իր հայրենի հողը կը սիրէ, թէև ուր ուրնք վուշեր և տատասկներ կան որ անոր ամման արգելք կըլլան. ըստ որում Ծ՚աղէնը, ինչպէս տարագիր Հայը ուր որ երթայ, դարձեալ իր հայրենեաց համար կը հառաչէ, թէև հայրենեացը երեսէն ուր ուրծին հալածանք կրած ըլլայ. ըստ որում այն պատճառները, որով ազատ թերթ մը անտանելի կը թուէր քաղքիս հայ հասարակութեան, հիմակ ջանհետացած են և Ծ՚աղէնը առանց վարանման կրնայ իր բնիկ հողը գտնալ· · · :

Ա՛ն թերևս իրաւունք ունինք կարծելու որ ազգի Հիւծի հայը մամուլի վրայ չմտածեր այնպէս, ինչպէս որ կը մտածէր սարի ու ձկնառաջ: Ո՛չ դործեց այս փոփոխութիւնը. — փորձառութիւնը: Այո, փորձառութիւնը բաւական եղաւ աղատ հրատարակութեան դէմ ղենեալ մարդիկը համոզել որ մամուլի դէմ բռնի մաքառիլ օդը սուրերով ծեծել է, ինչպէս ծեծեց արևելեան բռնաւոր մը ծովը շղթայով: Ալան ալ ծուռ ու մուռ կարծիքները ճշմարտութեամբ միայն կարելի է ջրել և ոչ բրով և գաւազանով: Այժմ մեր հայրենակից հայը թերևս ազատ հրատարակութեան ճաշակը կ՚առնու և կը փնտռէ այն թերթերը որ իմաստ, լուր, ազատ տեսիլ, նորաձև ոճ մը և մանաւանդ ճշմարտութիւն կը պարունակեն, թէև տակաւին չունի այն ընկերական և ազգային կեանքը և ոգին, որ արդար կարծիքէ մը արդիւնք մը կը հանեն, որ խօսքը ընթացքի հետ համաձայն կը դործեն: Վէճադատութենէ չվախնալ նա, թէև փոքր ինչ կը դժարի երբ քննադատութիւնը իր հրապարակային շեղումներուն վրայ կը դառնայ:

Ծ՚աղէնը պիտի զգուշանայ, չեմ ուսումնայ, այլ իրրև անօգուտ, ստէպ խօսիլ քաղքիս ազգային այնպիսի խնդիրներու վրայ, որոց լուծումը ժամանակը պիտի բերէ և յամառութիւնը պիտի ամբէ: Միշտ հաշտարար ուղղութիւն մը պիտի բռնէ, ոչ այս և ոչ այն կուսակցութեան կողմը

տաշելով, վասն զի Ծաղկի համար մեկ կուսակցութիւն կայ միայն, այն է ապագայինը։

Ահա տրամադրութեամբ Ծաղկին կը յուսայ որ իր հայրենակիցները սիրով կընդունին զինքը իր ծոցը և երթէ սխալմունք մ'ըրած է՝ ներելով՝ անոր յառաջադիմութեան համար իրենց պաշտպանութիւնը և ձեռնտուութիւնը կը շարունակեն և կ'աւելցնեն։ Օ միւռոյզող անպատուութիւն մը չէ երկու երեք թերթի մտնեղ և պատպատան տալ, մանաւանդ իրենց ուսումնասիրութեան յայտնի նշաններէն մին։ Սակայն չենք ուզեր մոռնալ այս առթիւ մեր հեռակաց բաժանորդները, որ մինչև ցարդ իրենց աջակցութիւնը չը զլացան մեզ, և կը փութանք ապահովցնել որ Ծաղկին ամէն ամսոյ 15ին և 1ին անհրաժեշտ պիտի հրատարակուի և բոլոր բաժանորդաց ձեռքը ըզչափ կարելի է շուտով հասցնելու փոյթ պիտի տարուի։

ՎԱՐԱԺ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ։

Ի՞ՆՉ ԵՂԱՒ։

Ամէն մարդ դիտէ թէ՝ երբ առաջին անգամ Սահմանադրութեան խնդիրը Ազգին մէջ յուզուեցաւ, այլ և այլ դասի մարդիկ սկսան այլ և այլ կերպով մտածել, խօսիլ և գրել այս կարևոր խնդրոյն վրայ։

Վեղարը ամբարշտութեան նշան մը տեսաւ անոր մէջ, ամիրան աստստամբութեան, ողջամիտը արդարութեան և օրինաւորութեան երաշխաւորութիւն մը, ռամիկը արքայութեան դուռը, իսկ նորոգեալ Հայը ծաղոտ առարկայ մը։

Կրօնական դասը կըսէր։ — Սահմանադրութիւնը գործի մ'է որ երեսփոխանութեան միջոցաւ խեղ մը անխորհուրդ և անկրօն սատանիներ ազգային կառավարութեան ղեկը ձեռք պիտի առնուն, որպէս զի մեր հոգևոր իրաւասութիւնն ու իշխանութիւնը կործանեն և Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ նորոգութիւն և հերետութիւն մուծանեն։ Եւ այս դասուն բերանն էր աստուածաբան Եփեսը և ծան. Ծաղամիտ Աբեղեան Գաբը։

Ամիրայից դասը կըսէր։ — Օսմանեան կառավարութիւնը միապետական է, միապետական կառավարութեան մը մէջ սահմանադրական հաստատութիւն մը հակասական է և աերութեան օրինաց հակառակ։ ուրեմն ազգային Սահմանադրութիւնը պատամրութեան պրոշակ մ'է, աերութեան մէջ աերութիւն մ'է, մեր զօրութեան քանդումն է։ Եւ այս դասուն բերանն էր քաղաքագէտ Եփեսը։

Ողջամիտ մասը կըսէր։ — Ի վաղուց անտի Օսմանեան պետութիւնը մտանաւոր արտօնութեամբ ամէն հպատակ հաստատակութեան առանին և ազգային գործերու տեսչութիւնը նոյն հաստատակութեան յանձնած է. Հայոց մէջ այս վարչութեան գլուխը կը պահուէր մերթ պատրիարք մը, մերթ հայ բըռնաւոր մը, որոց կամքը, կիրքը, անձնական շահը օրէնք էր։ Հետևապէս պատրիարքարանի վարչութիւնը անկանոն, շփոթ և ազգաւեր էր. ուրեմն կանոնադրութեան մը պէտք կար, որպէս զի ազգային գործերը արդար, օրինաւոր և հրապարակային ուղղութիւն մ'առնուն, ինչպէս որ Հոռոմ հէնարայանն ալ կը տրամադրէ, և այս օրէնքը Սահմանադրութիւնն է։ Եւ այս կարգ մարդոց բերանն էր, Մասխ, Մեղբ, Սբ-Նշան, Սէբ ու Ծաղիկ։

Ռամիկը կըսէր։ — Դարերէ ի վեր դերութեան և թշուառութեան լուծը կը ճնշէ վիզս, ոչ հայ ունիմ, ոչ լոյս, ոչ սիրտ։ Կրօնականը հոգիս ու քսակս կը քամէ, իշխանը գլուխս կը ճզմէ և ես կրինակի սարուկ դարձած եմ և կամք չունիմ և ոչ կարողութիւն իմ տնական և ազգային գործերս տնօրինելու։ Սահմանադրութիւնը մեր բոլոր ցաւերուն դարմանը պիտի լինի, մեզի առատութիւն, բարօրութիւն ու երջանկութիւն պիտի բերէ և ուղղակի եդեմական դրախտը պիտի տանի, ուր առանց աշխատանքի ամէն բան պիտի վայելենք։ Եւ ռամիկը յոյսեր ունէր և ոչ հրապարակային գործ և բերան։

Իսկ նորոգեալ Հայը կըսէր։ — Եթէ կասիկը մարդու հաղուստ հագնելով մարդու կարգ կ'անցնի, նոյնպէս Հայը Սահմանադրութեամբ պարուրուելով սահմանադրական կրնայ համարուիլ։ Որչափ հեռի է կասիկը կենդանեաց դասուն մէջ բանական էակէն, նոյնչափ զուրկ է Հայը Սահմանադրական դրութենէ, որ ազգի մը մէջ հիմ բըռնելու համար զանազան անհրաժեշտ պայմաններու կը կարօտի։ Արդ՝ այս պայմանները, որ տեղական կացութեան, ժողովրդեան բարուց ու վարուց, սրտի և մտքի կրթութեան կը վերաբերին, Հայը չունի։

ուբեան Սահմանադրութիւնը, մանաւանդ Հայուն հաստատելիք Սահմանադրութիւնը, պաշտօնական կատակ մ'է, խայծ մը՝ որով Ազգը պիտի պատրի, մինչև որ անդունդը ղլորի։ Եւ այս կարգի մարգոյ բերանն էր Սէֆիան։

Ա.յս կարծիքներէն ո՛րն էր Ճշմարիտը, ըստ իս, և ոչ մէկը առանձին, իսկ ամէնը քիչ շատ։

Եւ արդարև եթէ Սահմանադրութեան հաստատութենէ մինչև կործանումը, անոր գործադրութեան կերպը, Ազգին մէջ պատահած յուզմունքը, դէպքերը, վարչութեանց և ժողովրդեան ընթացքը և պէս պէս հանգամանքը նկատենք, եթէ նկատենք որ կրօնականը՝ կիրքերը ամոքելու, սէր ու միաբանութիւն քարոզելու տեղ զանոնք գրգռեց ու բորբոքեց, Սահմանադրութեան անուին առջև քարեր նետելով՝ և մերթ Հանրէի նղովքը, և մերթ իրաւասութեան խնդիրը ծնցուց, որ ազնուականը միշտ իր վաղեմի իշխանութեան կորուստը ողբալով՝ պաշտօնական դռները զարկաւ, ազատ հրատարակութիւնը հալածեց, կրօնական ոխակալութեան կրակը փչեց արծարծեց, մանութեամբ դարաններ լարեց, օրինաւոր իշխանութենէ դուրս իշխանութիւն մը հարկեց, անդուլ հակառակութիւն մը յարոյց ամէն տեսակ օրինաւոր որոշումներու դէմ և աստվ ժողովրդեան զայրոյթը բորբոքեց, այնչափ որ նախ ազգովին հաստատուած Սահմանադրութիւնը կործանելու դաղտնի շարժառիթը եղաւ։ Եթէ նկատենք որ, ինչպէս կրօնականը քրիստոնէական սէրը, և ամբրան քաղաքական խոհեմութիւնը մոռցաւ, ժողովուրդն ալ՝ Սահմանադրութեան նախորդ դադարման վրայ աւելի ևս զայրացած՝ մոռցաւ չափաւորութիւնը, մոռցաւ քաղաքական դիրքը, մոռցաւ արդարութիւնը և օրինաւորութիւնը և ամէն բան ոտնկոր ընելով՝ ազգային պատրիարքարանին դռները գոցեց և ահ ու սարսափ ու կասկածներ ազդեց։ Եթէ նկատենք որ Սահմանադրութեան տիրովին հաստատութիւնը հին կրից և դաղտնի դժուութեան հետքը չի ջնջեց, ժողովրդին և աղնուական սեպուած դասուն մէջ բացուած սկզբունքի և դրութեան կռիւը չի լուծեց, որով նոր Սահմանադրութիւնն ալ երերուն ընթացք մ'ունենայաւ։ Պաշտօնական մարմինները մեծագոյն մաս կազմելով՝ ներսէն սկսան քանդել Սահմանադրութիւնը, ազգային պաշտօնեաները իրենց բարոյական պատասխանատուութիւնը ուրանալով՝ լաւ ևս ըսեմ, իրենց խիղճը մոռցան, անհատները իրենց պարտքը և իրաւունքը զանց ըրին, նոր նոր և անպատեհ խնդիրներ, որ ազգին և եկեղեցւոյն կը վերաբերէին և որոց լուծումը թերևս ապագան ցոյց տար, յուզուեցան, և ահա այն ատեն ազգն ու եկեղեցին վտանգի մէջ է ըսելով՝ միաբերան դրութեան բարեկամները և կրօնական դասը նորէն միացան հրապարակաւ, և Սահմանադրութիւնը վէճի տակ ձգելով՝ համամասութեան խնդիր մը բացին՝ որուն հետևեցաւ, իբր պատասխանութեան հետևութիւն մը՝ իրաւասութեան խնդիրը, որ պատրուակ մ'էր քաղաքական ժողովին կործանումը պատրաստելու համար, և՝ ի վերջէ Սահմանադրութիւնը թակարդն ընկաւ.....

Ա.յո՛, եթէ այս պատճառները այսպէս վեր՝ի վերոյ նկատենք՝ պիտի ըսենք որ՝ թէ կրօնաւորը, թէ աղնուականը և թէ ժողովուրդը իրաւունք ունին. բայց միթէ այս ըսելով կարող ենք նաև պնդել թէ՝ այլ և այլ մտքի և կուսակցութեան տէր անձինք քաջ ըմբռնած էին թէ Սահմանադրութիւնն ի՞նչ է և դերինը ի՞նչ էր, և Ազգին մէջ ինչ նպատակի պիտի ծառայէր։ — Ո՛չ։

Ըստ որում եթէ ընդհանրապէս Ազգը քաջ համոզուած լինէր որ Սահմանադրութիւնը ուրիշ բան չէ բայց միայն ազգային գործերու օրինաւոր տեսչութիւն մը, եթէ դիտնար որ իր եկեղեցական դրութեան մէկ բնական արդիւնքն է, եթէ իր ազգային և կրօնական շահուց և ինքնօրինական իրաւանցը ու պարտուցը վրայ լուսաւորուած լինէր, եթէ իր ազգայնութեամբը, լեզուաւը, եկեղեցիովը և պատմութեամբը իր բարոյական կշիռը, դիժը և արժանապատուութիւնը և տէրութեան տուած արտօնութեանց արժէքը ճանչցած լինէր, եթէ առ Օսմանեան պետութիւնն ունեցած հաւատարմութեան կապը որքան պինդ և անկեղծ՝ և իր յառաջադիմութեան պայմանները նոյն տէրութեան բարօրութեան պայմաններուն հետ որքան սերտիւ կապուած լինելը ղգացած լինէր, ոչ 62ին յուլիսի դէպքը կը պատահէր, և ոչ 66ին մարտի 20ին վարչական պատահարը։

Եւ ի՞նչ էր առջի եռանդին և վերջի վարանման պատճառը։ Պատճառը՝ ոչ հանրական տգիտութիւն մ'էր, ըստ որում Սահմանադրութեան խորհուրդն ու պէտքը քսան տարիէ՝ի վեր ամէն միտք, լեզու և լրագիր կը յուզէին և մեր կրօնական դրութեան միջական հետևութիւնն էր. ոչ ազգային բարուց և վարուց անյարմարութիւնը, ըստ որում իր եկեղեցական սպասաւորները որոշելու և ընտրելու իրաւունքը վայելող ազգ մը կ'ենթադրէ որ

քուէարկութեամբ իր ազգարհական պաշտօնակալներն ալ սահմանել դիտէ, ոչ անմիաբանութեան ոգին, ըստ որում անդուր հալածանաց դիմադրաւ կենալով՝ մինչև այսօր ապրող ժողովուրդ մը պատմութիւն՝ ի ձեռին կրնայ ցոյց տալ որ արդար և օրինաւոր դատի մը համար պատրաստ է մի սիրտ և մի հոգի կրել. այլ էական պատճառն էր անչինմն երկիւղ մը, արհաւիրք մը՝ դարաւոր դերութեան և թշուառութեան իրր հետևութիւն՝ ներքին բարոյական աղատութեան կամաւոր ուրացութիւն մը:

Այս բարոյական ներքին զօրութիւնը՝ ի սկզբան Ազգը յանձնեց այնպիսի անձերու, որոց հայրենասէր ոգւոյն, հանճարին և քաղաքական փորձառութեան վրայ համարում ունէր, որպէս ղի Տէրութեան շնորհած արտօնութեանց, իր սեպհական իրաւանց և ժամանակին ոգիին համաձայն՝ ազգային կառավարութեան ղեկը դէպ՝ ի յառաջադիմութիւն ուղղեն: Այս յանձնարարութեան ուժովը Սահմանադրութեան հեղինակները իրենց պաշտօնը աւարտեցին և գործադրութիւնը Ազգին յանձնեցին: Սահմանադրութեան յայտնի և թպդուն շնորհները այս հանրական և լուին շարժումը տեսնելով՝ ափիբերան կեցան և Ազգին կամքը յարգելու դիտմամբ՝ նոր Սահմանադրութիւնն ալ յարդել կեղծեցին: Ժողովուրդը այս կեղծաւորութենէն խաբուեցաւ և միամտաբար իր կամքը և Սահմանադրութեան գործադրութիւնը յանձնեց իր պաղտնի շնորհներուն ձեռքը... Սահմանադրութիւնը առջի օրէն սկսաւ կաղն՝ ի կաղ դնալ, անդուսալի արդելքներ օր ըստ օրէ երևան կ'ելնէին, շատ մը խնդիրներ, մանաւանդ աւուրքի խնդիրը, որուն որոշմամբը Սահմանադրութիւնը պիտի քալէր, կամաւ անլուծանելի կը մնային: Բողոք, աղաղակ, յայտարարութիւններ եղան ժողովրդեան կողմէն, նոյն ինքն ժողովուրդը ոտք ելաւ և իր Սահմանադրութիւնը պաշտպանեց, սակայն, երբ տեսաւ որ անլուր զրպարտութիւններ կը տեղան իր վրայ, երբ տեսաւ որ բանսարկութիւնը իր ամենէն անմեղ զբօսանքը իրրև ապստամբութեան հանդէս կը ներկայացնէ Տէրութեան առջև, երբ տեսաւ որ նոյն իսկ Սահմանադրութեան հեղինակները իրենց պաշտօնական դիրքը փոխելով՝ փոխած են նաև իրենց համոզումը և հայրենասէր հոգին, անհնարին վհատութեան մէջ ընկաւ, երկիւղը զինքը պաշարեց, առ Տէրութիւնն ունեցած հաւատարմութիւնը ցոյց տալու համար իր դոյութիւնը զրեթէ մոռցաւ և իր իրաւունքը պաշտպանելու համար բաց դուռ մը չի գտաւ: Իր թշնամիները պաշարեր բռներ էին ամէն պաշտօնական դուռ և ականջ, իսկ Ճարտասան և անվեհեր ձայն մը չկար որ պաշտօնատան մէին մէնաղբրթը պատռէ և ճշմարտութիւնը լսել ընէ...

Ի՛նչ յատկութիւններ որ կարևոր են նոր հիմնարկութիւն մը ստեղծելու, նոյն յատկութիւնները հարկաւոր են ժողովուրդի մը, կըսէ Սաուբրիմիլ, զայն պաշտպանելու համար: Հայ ժողովուրդը Սահմանադրութիւն մը հաստատելու արիութիւնը ունեցաւ, սակայն զայն պաշտպանելու արիութեանը մէջ չի յարատևեց: Թէև այս արիութիւնը ոչ հուր, ոչ սուր և ոչ արիւն կը պահանջէր, այլ միայն փաստաբան լեզու մը, Ազգին օգուտը իր անձնական շահէն վեր դասող առաքինի մարդ մը.... մասնութեան դարանները կործանելու ձեռնհաս քաղաքագէտ մը: Վասն զի Ազգ մը, մանաւանդ հայերուն դիրքը ունեցող ժողովուրդ մը՝ որչափ մեծ և բուռն լինի ուղելու հառանգը՝ երբ այս հառանգը ուղղող հանճար մը չի գտնուի, կը փարատի, կը մարի այն ապարդիւն. վասն զի երբ ժողովուրդ մը իր կամքը յայտնելու համար կ'ընտրէ կամ կը գտնէ ակամայ՝ այնպիսի գործի մը, որ պաղտնի իրեն դէմ կը գործէ, այն ժողովուրդը տիտանեան զօրութիւնն ունենայ անդամ կը յաղթահարի: Նոյնպէս յաղթահարեցաւ վերջէն հայ ժողովուրդն ալ երբ տեսաւ որ իր զգացմանց և փափաքանաց թարգմաններն են իր թշնամիները:

Սակայն ինչ ընել պէտք է այսպիսի պարագայի մը մէջ, ուղղակի դիմել անոր որ ճշմարտութիւնը լսելու տրամադիր և արդար դատաստան մ'ընելու պարտաւոր է: Այս մեր դատաւորը Տէրութիւնն է և մեր դատը արդար....:

Մ. Մ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Յուդիս 5. 66 Պօլիս.

Ազնիւ Ծաղիկ (*)

Երբ անկողնին մտայ լալու փափաք մ'ունէի, յարեց Պարոյր: Թէև զլուխս ծանր էր և գինիէ կը ներզուծէր, սակայն սիրտս այնքան թեթև և արթուն որ թև կառնուր Թռելու համար, պիտես ուր, ու կը փղձկէր քանի կը դիտէի այն նեղ աշխարհը որուն սահմանը առաջաստս էր: Ձրա-

(*) Այս պիրերը, թէև հին, արժան կը դատենք հրատարակելու, թղթակցութեան կարգը անչփոթ պահելու համար:

գին նանէ ու վրվրուն նշոյլը, որ առազաստիս գարկը էր, հիւսիսացի երեսյիթ մ՚ունէր և կարծես թէ կը յորդորէր զիս արևուն ծագման սպասել քան նկրհել : Ա՛հ, նկրհել, մեռնիլ է իրօք . մահ մը՝ որ վերածնութիւն կամ յաւիտենական կենդանագրէ իրաւ , և սասոյ նշանն է այն լոյսը որ կը վրվրէ մարդուս անարին վերի գին՝ երբ հրեշտակի մը թևերն ներքև կը ննջէ . այն ազգալ մամը որ կը վառի մեռելին վերևը՝ երբ սև հոգին մէջն է և հոգին թերևս քերոբէից գասուն հետ կը հակէ . . . Ուր ես նոյն ժամուն չէի կարող մեռնիլ և անքթիթ հսկելու մտօք՝ եւ լայ ձեռքս գիրքը մ՚առի, ճրագը բարձիս մօտ դրի և պատանքին մէջ պատրուելով՝ իր վրայ կարդացող ուրուական Գարոյրի մը կերպարանն առի :

Պատահմամբ Նարեկացին ընկեր էր ձեռքս և աչքս ՅԻՒ բանին Գ հատուածին վրայ ընկաւ . . . « Սպասուցես շրջափակ զպար զօրուդ երինայոյ . . . » սողին հասայ չհասայ և ահա աչքս սկսաւ մթնանալ և դրքին տառերը սև մառուկներու պէս ոստոստել : Պոյտ մ՚առաւ գլուխս , բոլոր տունը շուրջ կը դառնար , կ՚օրորէի , կը վերանայի մինչև որ չդիտեմ երբ՝ Նարեկացին ձեռքէս թռաւ , հողիս մարմնէս ելաւ ու անեզը անջրպետի մը մէջ սպացաւ . . . .

Երկիրս ոտքիս տակ իբր ամպապատ դնռակ մը կը թաւալէր , Պօլիս անհետացել ուղի կտոր մ՚եր , Ղազկեղունդ աւազէ հատ մը . . . . : Հողուն ու նոսր մշնոլորտ մը կը պատէր հատմոսփիւռս . մանր մանր լուսաւոր կէտեր կը նըշմարէի ու երկնաճեմ հիւսեր , որ պիտես թէ հրեշտակներ էին և դէս ու դէն դեղերելով՝ կ՚ուղէին տարածուիլ , երկրիս յիմարութիւններուս վրայ սաւան մը ծածկել և ջրհեղեղ մը սպառնալ : Ու արդարև երկին յանկարծ իր պարզ դոյնը կը փոխէ , հէաերը դունդադունդ կը տարան , կը սևնան , կ՚որոտան : Հրեշտակներէն մին հրաշէկ դէմքով մը վրաս կը վազէ , զիս կը կլէ ու կ՚սկսի պղծել : Ձամբան ուրիշ հրեշտ մը շփոթելով փայլակ կ՚արձակէ ու փայլակը երկնային սևաթոյր կամարին վրայ սողսկելու սանեն կարծես թէ Աչքէն անունը կը դրէ . . . անհետ կըլլէ . . . և նորէն երևան գալով լեռնաձև ամպի մը սարէն դալ ի վար կը սահի շանթելով ու սիրտս թռունդ կը հանէ . . . .

— Ա՛հ, դու ես Աչքէն ըսի ջրսի և ինքզինքս նոյն լերան վրայ գտայ , թէև ինքզինքս մի և նոյն անձը չգտայ . . . : Հանթէն սևցեր էր բոլոր մարմինս և մաղերս սպիեր . . . . : Ո՞ր ես , անողորմ օրիորդ , արի դիակս ալ կեր , գոչեցի և հաղիւ ողբագին ձայնս առի . ձայնս մարեր էր և անհնարին սոսկում մը պաշարեց զիս : Լերան վրայ շրջան մ՚ըրի . մէկ կողմէն ձիւնապատ ովկիանոս մը , միւս կողմէն հրեղէն կոհակներ , առջևս գահավէժ լեռներ , ետիս անհուն կապոյտ դաշտ մը տեսայ : Ո՞ր կերթայ , ո՞ գիտէ . . .

Յանկարծ ահագին շառաչիւնով մը իմ լեռս կ՚սկսի վառիլ ու շուրջանակի կրակ ու բոց արձակել : Ռոցերտն մէջէն սպիտակ ու ամեհի ևրիվար մը կը վազէր , վրան ծիրանի օրիորդ մը նստած՝ որ ծիածան աչքեր ունէր ու դրոշակ մ՚ի ձեռին . . . . Դրոշակին մէկ երեսը դրուած էր ՖԻՆ—ՏՈՒ (սէր) միւս երեսը տահ ապպոլիեան : Որջան ձայնս կը զօրէր գոչեցի , սէրդ չեմ ուզեր , տուր , մահ տուր աղատութեան զաւակի մը և զիս այս զեհենէն աղատէ . . . Նաղելը օրիորդը ձախընդելով մօտեցաւ ինձ , Աչքէնին դէմքն ունէր , ու ըսաւ . — Ա՛սա ու ապիրատ սողուն դու , ո՞ւսկից ընկար այս լեռը , որ Աչքա մահու լեռն է , որ հիւսիսին Սիպիր , հարաւին մեր երկնային չինական պետութիւնն , արևելքին Ովկիանոսը , արևմուտքին Ն՚ինայ աշխարհը կը նայի : Ա՛հ , դու իմ սէրս կը մերժես , իմ լուծս կը թոթռուս , որովհետև մեր Հայաստանի գաղտնի ծրագիրները ունիս . սակայն ես անոր պատասխան հրեշտակն եմ և թշնամիներդ անդունդը կը դահավիժեմ : Հոս կորիր և դուն , անօրէն ու անսիրտ օտարականդ , որ զիս ուրացար , ու գետնին տակը անցիր . . . այս ըսաւ , դրոշակին նիզակը լերան գարկաւ , լեռն է ձեղք բացաւ ու

գէս կլլեց: Ո՞մմ պէս գլխի վէր սահելցայ, սու-
զայ խոր ու խոր իջայ... շունչս հատաւ ու կի-
սամեռ անդունդին յատակը գտայ, ինչպէս եր-
բեմն Ըրիստոմէն: Կարծէի թէ մարմինս վրայ
լպրծուն իժեր, գալարուն օձեր ու կսրիճներ
կը պտրտին: Ոլոր ոլոր կուգայի, կը փրփրէի,
կը մռնչէի... և կ'երևի թէ նոյն միջոցին էր որ
վայնասունս արթնցուց քեզ Ա՛ղոյր: Սակայն Ը-
րիստոմէնը աղաւաղ աղուէսը, որ ֆէն — ֆո՜նէն
աւելի դուխ ունէր, չկար որ պոչէն բռնելով ելք
մը գտնէի: Դէռ ևս քաշելիք ունէի: Ընչքս բացի
գոցեցի և ինչ տեսնեմ ադէկ: Ձորս մարմնեղ
սատանաներ խարոյկի մը բոլորը առած՝ կը վչէին
ու կը վչէին ուժգին: Ձորսին դէմքն ալ ահ-
ռելի, ստուար, անձակատ: Ըպակիի նման ան-
լոյս ու կլոր աչեր, կարճ թուշեր ունէին և ու-
ռած այտեր, որ արիւն քիրտով լի՝ բոցին առջև
քստմնելի լոյս մը կը ցոլանային: Լայնաշուրթ
բերաններէն, տափակ քիթերու մօտ՝ խոշտակի
նման հով մը կը բուրէին և կենդանի վիշտներու
պէս շարժուն՝ կրակին չորս դին ճիշդ գնհնին զա-
նակներն էին:

Թէև խարոյկին երերուն ու տմոյն նշոյլը բա-
ւական չէր այս տարտարոսին մութն ու մուխը
փարատելով՝ չորս դևերուն բոլոր կերպարանք ե-
րևան հանել, սակայն ուր ուրեմն թռչտող կայ-
ծերէն նկատեցի որ մէկին գլուխը սրամէտ սեւ խոյր
մը կար. միւսին կուրծքը երևակի նշան մը, ա-
ստղ գտակին վրայ բանալի ու բոժոժ մը, անոր
ձեռքը գաշոյն մը....

Ներսէր խարոյկը հնոցի պէս բռնկիլ սկսաւ,
սատանաները առին զիս ու դագաղի մը մէջ դը-
նելով ատրուշանի մը առջև տարին: Ատրուշա-
նին վերի դին սեղան մը կար ու վրան գահ մը:
Գահը նստեր էր արձանի պէս ալեւոր ու պատ-
կառելի ծերունի մը: Ընծուի պէս սուր աչեր ու-
ներ, թէև կարծես թէ կը նիրհէր. ժպտուն շուր-
թեր ունէր, թէև կարծես թէ կ'աղօթէր, այս
տեսարանին առջև անտարբեր կերպարան մը ա-
ռեր էր, թէ և կարծես թէ դևերուն ողին ինքն
էր....

Ներևակի սատանան գահակալին դառնալով
ըսաւ խեղդուկ ձայնիւ մը: — Ա՛հա վեհապանց,
այս օտարականը դատաստան է կենացդ, սպառնա-
է տէրութեան, թշնամի է Ձէո՜ն (Աչն լուսոյ)
և որ մեծն է, հերեսիկոս կը հռտի և իբր այն
մանաւանդ՝ ողջակէզ պիտի նուիրուի վեհիդ...
— Օրհնեալ է կամք Ընդ – գո՜նէն (որպին լու-
սոյ), մրմնջեց ծերունին.... Ամէն, ըսին միւս
դևերը և ծափ զարնելով ճաղիս բոլորը պարել
սկսան: Ա՛ղջը սրամէտ խոյրը վառ փայտ մ'ա-
ռաւ և անոր լուսովը վրաս գիրք մը և յորդոր
կարդաց որ խոստովանիմ... Ո՛ւկ, շունչ չէի հա-
ներ... Նետեցէք, կրակը նետեցէք այդ գէշը,
պոռաց գինակիր դևը, կորած է հոգին արդէն:
Իսկոյն շալակ առին զիս ու հուրին մէջ նետե-
ցին... Լեզուապատառ կանգ առի և սոսկալի ա-
ղաղակ մը ձգելով խարոյկէն դուրս ընկայ....
Ընշուշտ այս աղաղակին է որ վերի աշխարհն ալ
ականջիդ հասած է Ա՛ղոյր.... Սատանաները,
որ միշտ մարդէ կը վախնան, Նէհո՜ — ծինէն, կեն-
դանի ծին է դոչելով՝ կծիկը ղրկին և մինակ բո-
ժոժաւոր այծը ակռաները կրճտելով՝ — Նոր ու-
րիշ տեղ պիտի բռնեմ զքեզ մռմռայ...

Ըրիւնս գրեթէ սառած էր, թէև կրակին
ելեր էի, շարժիլ չէի կարող և ոչ աղաւաղի
հնար մը գտնել....

— Ո՛չ, կարծէի թէ երազդ լմնցաւ, ըսի Պա-
րոյրին. կ'երևի թէ այս գիշեր քնանալու միտք
չունիս, թէև իմ աչքերս քունը կը վազի և մի-
նակ դահավէժ երևակայութեանդ հրէշներն, վի-
շապները, խարոյկներն ու սատանաներն քիչ մը
շարժ տուին գլխիս: Բայց ով պիտի մեկնէ այդ
երազդ. բաւական տաղտկալի է և կաղանդի ի-
րիկունները աղաքը զուարճացնելու յարմար....
— Բայց երբ գիս կրակը նետելու ելան, իմ վի-
ճակս զուարճալի չէր, բարեկամ, և ոչ կատակ
մը, ճակատս թափած պաղ քրտինքը... Նայէ
դեռ բարձս թրջած է: Նրագ մը դաշնակաւոր

հիւս մը չի կրնար լինիլ. մեկնութիւնը իր մէջն է։ Ուշադիր որ չինծու ու զարդարուն պատմութիւն մը հիւսէի։ Անբռակայի վէպի մը չի նմանիր այն, թէ որ կամք ունիս ըսէ, թէ ոչ կը լսեմ....

— Հարունակէ....

ՏՐԱՄԱԲՕՍՈՒԹԻՒՆ

ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ. ՍՏԵՓԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ ԿԱՐԱՊԵՏ ՊԱԼԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍ. Տկար եմ, ոյժ չունիմ. ինչպէս վերի, նոյնպէս վարի աշխարհս ճանգիատ չիգտայ, ամէն ինչ մութ եւ խաւարին կ'երեւի նուադած աչացս... Միմակ ևի Աստիկ մէջ, միմակ եմ նաեւ այս դամբանական վայրս. մեռելներն անգամ չինէ կը խորշին... Քայլ մ' առնէ ու չոկ գերեզման փոխէնդի: Սուրբ խաչի թաղէն սուրբ խաչի գերեզմանները անցայ, եւ ինչպէս անշունչ եւ պաղ կերպով անցայ անոնց մէջէն... Քահանայից դասը իմ քահանայական կարգիս վայել արարողութիւններ չի կատարեց, դալիրները վրաս չերգեցին, ժողովուրդը թաղումիս ուղեորը չեկաւ, եպիսկոպոս մը աճ ու դողով վերջին օծումն ըրաւ, չոսարարը շտապաւ մոմն մարեց, ժամկոչը դագաղիս վրայ քանի մը բաճ հող թափեց, քահանայն քանի մը խօսք մոմոայ եւ առանց եռին նայելու խոյս տուաւ, Հոգս մը ողջագին ձայնը չի լսեցի, կաթեկցութեան արտօսր մը շիրմիս վրայ չկնկաւ եւ, մանիս ծառէն դնկնող տերեւին չափ շշուկ մը չհանեց.... Եւ սակայն Աստղի մը հովիւն եի, թեւս անհոտ, Աստղի մը պատրիարքն եի, թեւս անգամ, Աստղի մը եկեղեցականն եի, թեւս առանց եկեղեցիի, Աստղի մը Աթանասիոսեան տոհմ, թեւս դրժեցի... Եւ սակայն արժանի եի այսպիսի մահուան, արժանի եի այսպիսի դամբարանագրութեան... Բայց գերեզմանէն անդին կայ կայ կըսեին, եւ յուսահատութեան մէջ անգամ յոյս եւ աթա դեռ մարը յոյս եւ յոյս չի տուաւ ինձ, ինչպէս իմ Աստղս գան մը, որէ առանց գգալու սահեցայ դնկայ. անկում մը որ գիս միշտ այս տեղս սիրտի գոյրեր.... Եւ ուր եմ, ուր սիրտի տանի գիս այս շարիդը... Աւ, դուն ես, սիրելի Պալեան, բարի եկար, պատեհ ժամուն հասար. գոհ ձեռքդ տուր, որդեակ, որ շիտակ քալեմ. ինչ չար կայ անդինէն:

Կ. ՊԱԼԵԱՆ. Ձեռքս ու ոտքս դողի մէջ են. ես ալ նեցուկի կը կարօտիմ: Կոյրը կոյրին առաջնորդ կանգնեցուի երկուքն ալ խորխորատ կ'ընկնին, կըսէ Եղիշէ հայրը..., Այս տեղ ոչ արեւ կը տեսնեմ, ոչ երեսակ եւ ոչ ճիւսիսային, թեւս այս տեղ գարշ համար միշտ կը հսկեի, միշտ ծուռը կը դնէի, միշտ սաղմոս կը քաղէի, սակայն չեի երազեր քնաս որ իմ արտիս ոխտառուն մը այսպիսի թաւսուր եւ ամայի վայր մը լինի: Թերեւս քառասունը կը գտնուինք, Ա. Հայր.... Աստուած երես դարձուց մեզմէ անշուշտ, որովհետեւ տկարութենէս քիչ մը երես տուի հայագնեմ հերետիկոսութեան, որովհետեւ աւանդ սահմանադրական անցագիրը չտուիմ վտարեցուցի... Թեւս չ'ատորագրեցի.... Բայց հետս աշխոր եւ խնդրուածներս ծերունի մը կը տեսնեմ, որուն գլուխը դարձեալ պապակ մը կայ եւ իբր յաղթական կամարէ մը դուրս եկնելով դէպ 'ի մեզի կը դիմէ: Ո՞վ է այն... Ո՛ն, Աստուած չնորհ տայ. մեր տղայամիտ հայր Ստեփանն է, նոյն ինքն Տեղապահ պապան է, որ իր տեղը պահելու չափ ոյժ չտնեցաւ ու Եաղուկայի հողերը չամիելու զնաց...:

ՍՏԵՓԱՆ ԵՊԻՍ. Ի՞նչ բան ունիք այս տեղ, սիրելիներս... Միթէ դո՞ւք ալ ձանձրացաք վերի աշխարհէն, դու Սարգիս եղբայր, դու որ եթէ ոչ պատրիարք, գէթ նախկին պատրիարք էիր, դու որ, եթէ ոչ պատրիարքարանն, պատրիարքցուներուն ապարանք վարձու գնելով նանգիստ նստեր էիր, ինչպէս յոյսերդ վերի աշխարհը թաղեցիր եւ հոս իջար...

Իսկ դու, սիրելի Աբիրատ, դու որ դեռ Աստգիս օգտակար էիր, դու որ պալատներ, տաճարներ եւ հոյակապ ապարանքներ կը կանգնեիր եւ գրեթէ մութ եւ անշունչ խուցի մը մէջ կ'ապրեիր. դու որ թագաւորներու եւ իշխաններու հետ բերան առ բերան կը խօսեիր եւ յեղինի քահանայնի ոտիցդ փոշին կը հաւքուրելիր, դու որ կաթողիկոսներ, պատրիարքներ, կտակներ, ժառանգաւորաց դպրոցներ կը շինեիր եւ կ'աւրեիր եւ տղայի հետ տղայ, սուրբի հետ սուրբ կը շինեիր, դու որ ոսկիի նման քեր ունեիր եւ իբր տնանկ կը կենակցեիր, ըսո աստեղագնական բանին, դու որ տուներ կը շինեիր եւ գլուխդ սաղմոսի կամ քարի վրայ կը դնեիր՝ բնական տուղ Եկեղեցին ընելով՝... դու ինչպէս թողուցիր այն աշխարհն

որ քեզի կարօտ էր, այն ազգը, որ քու արժէքդ չէր ճանչեր, այն Սահմանադրութիւնը, որ քու խորհրդովդ պիտի ծողոգուէր եւ, ելար այս սխուր վայրս եկար, եւ որ մեծ է, առանց երեւակիս եկար...

ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍ. Աստուած պատէս ուզեց:

Կ. ՊԱՏԵԱՆ. Օրինեալ է կամք Տեառն:

(Շարունակելի)

ՅԱՊԱՂՈՒՄ

Բաղդը կը նմանի տեսակ մը շուկայի, ուր շատ անգամ եթէ փոքր ինչ սպասես, գիները կ'իջնեն, նոյնպէս կը նմանի երբեմն սիպիլեան պատգամին՝ որ նախ իր ապրանքը ամրողջ ծախու հանել և յետոյ մաս առ մաս այրել միացորդին համար մի և նոյն գինը պահանջելով(*): Վասն զի երբ անգամ մը բաղդը (ինչպէս որ ռամկօրէն կ'ըսուի) իր վարսագեղ ձակատը ցոյց տայ և դուն յանպատրաստ անոր մազերէն բռնելու, իսկոյն կըռնակը կը դարձնէ ու կունտ ղլուխը կ'օրէ: Կամ լաւ ևս ըսեմ, նախ սրուակին վիզը կը ցուցնէ որ բռնես և ապա կողը՝ որ աւելի դժուարին է ընդբռնել: Արդարև մեծագոյն իմաստութիւնն է ժամանակին ձեռնարկ մը սկսիլ և ճամբայ ելնել: Վտանգ մը թեթև է չըսուիր երբ անգամ մը հեռուէն թեթև կ'երեւի. և ստէպ վտանգը խաբած է մարգս քան թէ բռնադատած: Նա մանաւանդ լաւագոյնն է կէս ճամբու վրայ քանի մը վտանգներու հանդիպիլ, թէև մօտալուտ չեն, քան թէ անոնց գալուստին վրայ երկայն ժամանակ հսկել. վասն զի եթէ մարդ մը ընդ երկար հսկէ, հաւանական է որ քունն ալ կոխէ ու ննջէ: Միւս կողմն երկայնաձիգ սեսիլներէ պատրիլ (ինչպէս որ ոմանք խարուեցան երբ լուսինը յած էր և ըլոյը իրենց թշնամիներուն եանէն կը զարնէր) և այսպէս ժամանակէն առաջ հրացանը պարպել, կամ վտանգներ պուշակել, կանխաւ անոնց վրայ խելք ու միտք յօդնեցնելով՝ ուրիշ տեսակ ծայրայեղ դատում մ'է: Իրաւ է որ, ինչպէս արդէն ըսինք, անհրաժեշտ է նախ դատել ու կշռել թէ ձեռնարկութիւն մը ժամանակը հասած է թէ ոչ: Եւ ընդհանրապէս մեծ գործերու սկզբնաւորութիւնը պէտք է հարիւրականեան Աբլոյին յանձնել և վախճանը հարիւրամատն Պրիարէոսին: Վասն զի հարկ է նախ հսկել և ապա շուտ շուտ շարժիլ: Պլուտոնի տաղտարոսը, որով քաղաքագէտ մարդը անտես կը շարժի, ուրիշ բան չէ այլ միայն զաղանապահութիւն խորհուրդի մէջ և շուտութիւն գործադրութեան մէջ, նման հրացանի մը դնդակին որ օդին մէջ այնչափ արագ կը թռի որ հազիւ աչքը անոր կը հասնի:

ՊԱՌՕՆ.

(*) Հռոմի Տարկէն գոռոզ թագաւորին օրովը անծանօթ կին մը՝ ինը հատոր գիրք ձեռքն առած՝ արքունիքը գնաց որ զանոնք ծախէ և մեծ գումար մը պահանջեց: Տարկէն նոյն գումարը տալու մերժեց. կինը հեռացաւ և իր հատորէն երեքը այրեց: Շատ չանցաւ նորէն թագաւորին դիմեց և մնացած վեց հատորին համար մի և նոյն գինը ինդրեց: Կինը իր խելագար պալատէն դուրս վռնտուեցաւ: Սակայն վեց հատորէն երեքն ալ այրելով՝ երրորդ անգամ եկաւ թագաւորին և մնացած երեք հատորին համար պահանջեց ինը հատորին համար պահանջած գինը: Տարկէն այս կնկան յամառութեան վրայ զարմանալով՝ երեք հատորը վհուկներուն յանձնեց որ քննեն: Վհուկները տեսնելով որ Սիպիլեան պատգամներուն հաւատածոյն է այն, իրր անգին գանձ մը գովեցին: Հետեւապէս Տարկէն կնկան պահանջած գումարը վճարեց և հրամայեց որ Կապիտոլեան Արամազդայ կռատան մէջ պահուին:

Նախ քան զամենայն ի սկզբանէ ստեղծեաց Աստուած զերկինս եւ զերկիր:

ԾԱՂԻԿ ամէն երկու անգամ կը հրատարակուի:

Վերամբարձ շրջանին գինն է երկու ու կէս մէճիտ ֆռնկի:

Բաժանորդագրութեան տեղերն են.

ԶՄԻՒՐՆԻԱ. Ծողի դրատունը, Կիրիա խան.

ՊՕԼԻՍ. Մոնը-Ժէ Էֆէնտի դրատունը, Բէրա, չամակ փողոց. 467 —

ՆԻԿՈՄԻԴԻԱ. Մեծ. Թ. Խ. Իւքիճեանի դրատունը.

ԲԷՐԻԱ. Մեծ. Ց. Քիւրքճիանօղլի դրատունը.

ԵՐՈՒՍԱՂԷՄ. Մեծ. Ցովհ. Քալֆաքճեանի դրատունը.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. Մեծ. Նշան Օհանեանի դրատունը:

Այս Յ. շրջանը սկսելու առթիվը Ծաղիկը կը խնդրէ դեռ առջի շրջաններուն գինը չի վճարող բաժանորդներէն, որ շուտ ըլնեն անյապաղ իրենց պարտքը հատուցանելու, որպէս զի նոր շրջանին թիւերն ալ ընդունին:

ՏՆՕՐԻՆ
ԴՐԻԳՈՐ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ԶՄԻՒՐՆԻԱ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ